


ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
(գիտական հոդվածների ժողովածու)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորմամբ*

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱԴԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական
Ա 597 հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչապրյան

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԼՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ..... 9

Սվեդրյանա Հարությունյան

ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրյան

ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան

ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ..... 42

Էլենորա Զաքարյան, Մարինե Միքայելյան

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան

ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ61

Մանե Տոնոյան

ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան

ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրյան

ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ..... 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվեդրյանա Հարությունյան

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ113

Լիլիթ Ավերիսյան, Սոնա Մանուսյան

ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ
ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՈՒՄ 128

Քնարիկ Առաքելյան

ԱՆՁԻ ՁՈՎԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ..... 145

Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ՇՐՋԱՆՈՒՄ..... 153

Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԸՄԲՈՆՈՒՄԸ..... 179

Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՅՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈՂՄՈՒՆՔՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ..... 193

Ասպրիկ Սերոբյան

ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՌԻՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ..... 210

Անուշ Մկրտչյան

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ԱՍՊԵԿՏՆԵՐԸ..... 227

Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան

ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան

ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257

Նարինե Աղամյան, Իրինա Խանամիրյան

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ
ԱՐԺԵՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 263

Կարինե Գրիգորյան

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

**ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

*Էլեոնորա Զաքարյան
Մարինե Միքայելյան*

Հատուկ կարիքներով երեխայի զարգացման ընթացքում էական նշանակություն ունի օրգանիզմի կենսաբանական փոխհատուցման պոտենցիալ հնարավորությունների իրացումը: Դա նպաստում է երեխայի առողջական վիճակի բարելավմանը և հնարավորություն ստեղծում ակտիվորեն ներգրավվել սոցիալական միջավայրում: Հասարակության մեջ հատուկ կարիքներով երեխաների ներառման գործընթացում մեծ դեր է խաղում ոչ միայն կենսաբանական, այլ նաև զարգացման առանձնահատկությունների սոցիալ-հոգեբանական փոխհատուցումը:

Մի կողմից՝ զարգացման առանձնահատկությունն ինքնին փոխհատուցման խթաններ է ստեղծում, մյուս կողմից՝ ներառումը հասարակության մեջ ուժեղացնում է փոխհատուցման գործընթացները, քանի որ հատուկ կարիքներով երեխան կենսական նպատակ է ձեռք բերում և զգում է իր անձի նշանակալիությունը: Հատուկ կարիքներ ունեցող մարդկանց ադեկվատ պատկերացումն իրենց ուժեղ և թույլ կողմերի մասին, կյանքի իմաստի և նպատակի որոնումը, սեփական անձի ստեղծագործական ներուժի ակտիվացումը զարգացման առանձնահատկությունները փոխհատուցելու, ինքնահաստատվելու գործուն միջոց են:

Հոգվածի նպատակն է ուսումնասիրել փոխհատուցման և գերփոխհատուցման վերաբերյալ հայեցակարգերը, դիտարկել մարմնական թերությունների կենսաբանական, սոցիալական և հոգեբանական փոխհատուցման առանձնահատկությունները, մատնանշել դրանց կարևորությունը հատուկ կարիքներով երեխաների անձի ձևավորման և սոցիալական ակտիվության դրսևորման մեջ:

Հոգվածի շրջանակներում վերլուծվում են Լ. Վիգոտսկու, Ա. Ադլերի, Վ. Ֆրանկլի, Ի. Պավլովի, Կ. Բեռնարի, Վ. Քենոնի, Վ. Նիկոլայևայի, Վ. Սուխարյովի, Ռ. Գրանովսկայայի, Ի. Նիկոլսկայայի և այլոց տեսակետները թերաթեքության զգացման և փոխհատուցման մեխանիզմների գործառնման վերաբերյալ:

Ներկայումս հոգեբանները կարևորում են փոխհատուցման նշանակությունը հատուկ կարիքներ ունեցող երեխաների զարգացման մեջ՝

ընդգծելով, որ վերջիններս պասիվ կերպով չեն հարմարվում թերության կենսաբանական պայմաններին, այլ ընդունակ են հաղթահարել դրանք [4, 6, 7, 10, 13, 16]: Թերաթեքության բարդույթը նպաստում է անձի պաշտպանական մեխանիզմների ակտիվացմանը, մարդուն դարձնում է համառ և նպատակաուղղված: Ընդ որում, արատի փոխհատուցումն ուժեղանում է սոցիալական գործոնների ակտիվացման, ծնողների, մանկավարժների կողմից երեխաներին ցուցաբերվող օգնության դեպքում:

Համեմատաբար վաղ շրջանի մոտեցումներում սխալ պատկերացում կար մարմնական թերությունների կենսաբանական փոխհատուցման վերաբերյալ: Ենթադրվում էր, որ իմաստուն բնությունը, մարդուն զրկելով մի զգայությունից, օժտում է զգայության մյուս օրգանների բացառիկ ընկալունակությամբ՝ կարծես պարզևատրելով թերության դիմաց: Այսպես, հաճախ կիսահրաշ բաներ էին պատմում կույրերի շոշափելիքի անսովոր զգայության կամ խուլուհամրերի տեսողության մասին: Այդ պատմություններում ճշմարտացի է այն դիտողությունը, որ զգայության որևէ օրգանի չգործելու դեպքում մյուսները կարծես փոխարինում են նրան և սկսում այնպիսի գործառույթներ կատարել, որոնք սովորաբար չեն կատարվում բնականոն զարգացող մարդու մեջ: Իրականում կույրերի շոշափելիքի և խուլերի տեսողության բացառիկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ օրգանները մեծ նշանակություն ունեն օրգանիզմի համար: Այդ զգայարանները «պարտավոր» են միջավայրի հետ մեծ քանակությամբ կապեր ստեղծել, որոնք բնականոն զարգացող մարդկանց պարագայում այլ ուղիներով են իրականացվում: Այստեղից էլ առաջանում է տվյալ զգայարանների ֆունկցիոնալ, երկարատև օգտագործման հետևանքով առաջացած առավելությունը, որը սխալմամբ համարվում էր բնածին, կառուցվածքային:

Ակնհայտ է, որ փոխհատուցման կենսաբանական տեսության մեջ արդեն կար այն գիտական կանխազգացումը, համաձայն որի՝ կորսված գործառույթը խթանում է իրեն փոխարինող գործառույթների զարգացումը: Այնուամենայնիվ, այդ կանխազգացումը պարզունակ ձևով էր արտահայտվում: Զգայության օրգանների միջև հարաբերությունները նմանեցվում էին զույգ օրգանների միջև հարաբերություններին. իբրև թե շոշափելիքը և լսողությունը փոխհատուցում են չգործող տեսողությանը, ինչպես առողջ երիկամը հիվանդին է փոխհատուցում: Բացի այդ, հաշվի չէին առնվում փոխհատուցման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Ա. Ադլերը հանգամանորեն վերլուծում է մարդու թերաթեքության բարդույթի առաջացման պայմանները և թերությունների փոխհատուցման-գերփոխհատուցման միջոցները՝ իր հոգեբանական համակարգի հիմքում դնելով թերաթեք օրգանների և դրանց գործառույթների

վերաբերյալ ուսմունքը: Նա նշանակալի ներդրում ունի հատուկ կարիքներ ունեցող երեխաների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեջ [2, 3]:

Կենսական դժվարությունների հանդիպելիս ֆիզիկական խնդիրներ ունեցող մարդկանց մեջ անվստահություն է առաջանում: Դրա հետևանքով երեխայի բնածին արատը զարգացման վաղ փուլերում թերարժեքության զգացման պատճառ է դառնում: Վերջինս երեխայի մեջ առաջացնում է մշտական տագնապ, գործունեություն իրականացնելու, սեփական ուժերն ուրիշների հետ համեմատելու, ֆիզիկական և հոգեկան կատարելագործման ցանկություն: Եվ քանի որ թերարժեքության զգացումն աստիճանաբար անտանելի է դառնում, մարդուն մղում է որոշակի գործողությունների. կատարվում են բազմաթիվ կոմպենսատոր փորձեր, մինչև օրգանիզմը զգում է, որ կարող է շրջապատի պահանջները բավարարել: Արդյունքում՝ մարդն իր առջև նպատակ է դնում: Կյանքի նպատակի ձևավորումը սկսում է մանկական տարիքում՝ որպես թերարժեքության զգացման, մեծահասակների աշխարհում անօգնականության փոխհատուցում [3]:

Ա. Ադլերը ձևակերպում է օրգանական թերարժեքության փոխակերպման հիմնական հոգեբանական օրենքը. թերարժեքության սուբյեկտիվ զգացումը ձգտում է առաջացնում փոխհատուցման և գերփոխհատուցման նկատմամբ: Նա նշում է. «Օրգանների արատավորության զգացումը մարդու հոգեկան զարգացման խթան է հանդիսանում, անձի զարգացման շարժիչ ուժն ու ելակետն է: Այն որոշում է վերջնական նպատակը, որին ձգտում են հոգեկան ուժերը, և ուղղություն է տալիս անձի ձևավորմանը» [2, էջ 59]:

Գոյություն ունեն փոխհատուցման երկու հիմնական տեսակներ՝ ուղղակի կամ օրգանական և անուղղակի կամ հոգեկան: Ուղղակի փոխհատուցում դրսևորվում է զույգ օրգաններից մեկի վնասվածքի կամ հեռացման դեպքում: Օրինակ՝ մեկ երիկամի վնասվածքի դեպքում առողջ զույգ օրգանը կարող է փոխհատուցել վնասվածին՝ իր վրա վերցնելով նրա գործառույթները: Ոչ զույգ օրգանների (սիրտ, լյարդ և այլն) անլիարժեքության դեպքում ուղղակի փոխհատուցում հնարավոր չէ: Հետևաբար, տեղի է ունենում անուղղակի փոխհատուցում, որն իրականացնում է մարդու կենտրոնական նյարդային համակարգը: Վերջինս իր վրա է վերցնում օրգանի խանգարված գործունեության փոխհատուցումը՝ նորացնելով և կատարելագործելով օրգանի աշխատանքը: Թերարժեք օրգանի վրա հոգեկան համակարգը բարձրագույն գործառույթներից պաշտպանական վերնաշենք է ստեղծում, որը ձգտում է աշխատանքի արդյունավետությունը մեծացնել թույլ կետում: Օրինակ՝ անբավարարության դեպքում սիրտը կարող է մեծանալ՝ ձգտելով հաղթահարել խանգարումը:

Այսպիսով, մանկական տարիքում ծագած թերարժեքության զգացումը հաղթահարվում է կոմպենսատոր հոգեկան վերնաշենք ստեղծելու միջոցով, որն օգնում է կյանքում ձեռք բերել կայունություն և հասնել գերազանցության: Ավելացնենք, որ զարգացման ֆիզիկական առանձնահատկություններ ունեցող երեխայի մեջ սովորաբար տեղի է ունենում անուղղակի փոխհատուցում, քանի որ կուրության, խլության և զգայական այլ թերությունների ուղղակի փոխհատուցում հնարավոր չէ:

Մարդու հոգեկան զարգացման ընթացքում շատ կարևոր է հոգեբանական փոխհատուցումը: Հանրաճանաչ մարդկանց կենսագրությունները վկայում են, որ կամային ջանքերի միջոցով հնարավոր է հաղթահարել զարգացման թերությունը: Որպես ասվածի ապացույց կարող ենք նշել հենց Ա. Ադլերի օրինակը: Մանուկ հասակում նա հիվանդացել է ռախիտով. ուշ է սկսել քայլել և դժվար է տիրապետել մարմնին: Հետագայում շատերը նրա գիտական հետաքրքրությունները բժշկության և հոգեբանության բնագավառներում մեկնաբանում էին որպես այդ թերության փոխհատուցում:

Փոխհատուցման գործընթացը միշտ չէ, որ հաջողությամբ է ավարտվում: Անհաջող կամ ժամանակից ուշ փոխհատուցումը հանգեցնում է հիվանդագին վիճակի, և դրա հետևանքով երեխաների հոգեկանի մեջ նկատվում են ինքնուրույնության պակաս, հենարան ունենալու և քնքշանքի նկատմամբ սուր պահանջմունք, որը վերածվում է վախկոտության, միայնակության, օտարի և անհայտի նկատմամբ գերզգայունության, պատժի և կատարած արարքի հետևանքների նկատմամբ մշտական վախի: Հաջող փոխհատուցման դեպքում երեխաները կարող են հաղթահարել դժվարությունները և զարգացնել իրենց ընդունակությունները: Ամենից հաճախ հանդիպում է միջին աստիճանի փոխհատուցում. այդ դեպքում երեխան լինում է սոցիալապես լիարժեք, աշխատունակ:

Հատուկ կարիքներ ունեցող երեխայի զարգացումը սոցիալական պայմանավորվածություն ունի: Օրգանական, բնածին պատճառները գործում են ոչ թե ինքնին, այլ անուղղակի կերպով, այսինքն՝ դրանք ազդում են երեխայի սոցիալական դիրքի վրա: Արատը փոխհատուցում է առաջացնում թերարժեքության զգացման միջոցով: Իսկ թերարժեքության զգացումը սեփական սոցիալական դիրքի հոգեբանական գնահատականն է: Այն դառնում է հոգեկան զարգացման գլխավոր շարժիչ ուժը: Ենթադրենք՝ օրգանական արատը թերարժեքության զգացում չի առաջացնում: Այդ դեպքում չի ծագի նաև հոգեբանական կոնֆլիկտ՝ չնայած արատի առկայությանը: Ի վերջո, հատուկ կարիքներ ունեցող մարդու ճակատագրի վրա ազդում է ոչ թե արատն ինքնին, այլ նրա սոցիալ-հոգեբանական հետևանքները: Փոխհատուցման գործընթացները նույնպես ուղղված են ոչ թե

արատի հաղթահարմանը, որը մեծ մասամբ անհնար է, այլ արատի հետ-
ևանքով առաջացած դժվարությունների հաղթահարմանը:

Մենք կարծում ենք, որ արատի ազդեցությունը միջնորդավորված
բնույթ է կրում: Երեխան իր զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձ-
նահատկությունն անմիջականորեն չի զգում, սակայն ընկալում է այն դժվար-
ությունները, որոնք պայմանավորված են դրանով: Սոցիալական միջա-
վայրի վերաբերմունքից կախված՝ զարգացման առանձնահատկությունը
կարող է իջեցնել կամ բարձրացնել երեխայի սոցիալական դիրքը:

Լ. Վիգոտսկին «Արատաբանության հիմունքներ» աշխատության
մեջ [5] գրում է, որ երեխայի անձի ձևավորման ընթացքում թերությունը
երկակի և հակասական դեր է խաղում: Մի կողմից՝ այն թուլացնում է
օրգանիզմը, մյուս կողմից՝ դժվարացնելով և խանգարելով օրգանիզմի
գործունեությունը՝ մնացած գործառույթների զարգացման խթան է հան-
դիսանում, օրգանիզմը մղում է այնպիսի գործունեության, որը կարող է
փոխհատուցել թերությունը: Այսինքն՝ ցանկացած մարմնական թերություն
օրգանիզմի առջև խնդիր է դնում առաջացած վնասը փոխհատուցել, հաղ-
թահարել, և այդպիսով, թերությունը զարգացման խթան է հանդիսանում:

Հատուկ կարիքներով երեխան, ձգտելով փոխհատուցել թերությունը
և լրացնել վարքի պակասող ձևերը, մյուս օրգանների վրա նոր գործա-
ռույթներ է դնում և վարքը կազմակերպում այլ կերպ, քան մյուսները: Օրի-
նակ՝ ոտքերի բացակայության դեպքում ձեռքերի վրա պարտականություն
է ընկնում օգնել տարածության մեջ տեղաշարժվելիս:

Հետևապես, հատուկ կարիքներով երեխայի ուսումնասիրումը չի կարող
սահմանափակվել արատի ծանրությունը որոշելով, այլ պետք է հաշվի առնել
երեխայի զարգացման և վարքի փոխհատուցող գործընթացները: Ինչպես
բժշկության մեջ կարևոր է ոչ թե հիվանդությունը, այլ հիվանդը, այնպես էլ
անտմալ մանկության ուսումնասիրման օբյեկտ է հանդիսանում ոչ թե ինքնին
զարգացման թերությունը, այլ այդ թերությունը կրող երեխան, նրա անձի և
օրգանիզմի հակազդումը թերությանը:

Համաձայն Լ. Վիգոտսկու տեսակետի՝ հատուկ կարիքներով երեխայի
դրական յուրակերպությունը դրսևորվում է ոչ թե այն բանում, որ նրա
մեջ կորսված են այս կամ այն գործառույթները, որոնք ունի բնականոն
զարգացող երեխան, այլ որ գործառույթների կորուստը կյանքի է կոչում
նոր գոյացություններ, որոնք առաջացնում են փոխհատուցում: Հատուկ
կարիքներով երեխան այլ ձևով, այլ միջոցներով է հասնում նույն բանին,
ինչ բնականոն զարգացող երեխան:

Փոխհատուցման մեխանիզմները դիտարկելիս անհրաժեշտ է անդ-
րադառնալ նաև գերփոխհատուցման գաղափարին: Գերփոխհատուցումն

առաջին հայացքից տարօրինակ թվացող օրգանական գործընթաց է, որը հիվանդությունը վերածում է գերառողջության, թուլությունը՝ ուժի: Այսինքն՝ օրգանիզմի վրա ազդող վնասակար ներգործության հետևանքով օրգանիզմում առաջանում են պաշտպանական հակազդումներ, որոնք շատ ավելի եռանդուն և ուժեղ են, քան անհրաժեշտ է անմիջական վտանգը վերացնելու համար: Օրգանիզմը օրգանների հարաբերականորեն փակ համակարգ է, որն էներգիայի մեծ պաշար ունի: Վտանգի պահերին այն գործում է որպես միասնական ամբողջություն՝ ակտիվացնելով կուտակված ուժերի գաղտնի պաշարները, վտանգի տեղում հակաթույնի ավելի մեծ քանակություն կենտրոնացնելով, քան սպառնացող թույնի քանակն է: Նման կերպ օրգանիզմը ոչ միայն փոխհատուցում է հասցված վնասը, այլև պաշտպանվածության ավելի բարձր մակարդակի վրա է կանգնում, քան այն, ինչ կար վտանգը ծագելուց առաջ:

Ադլերը նշում է, որ գործառույթների գերլիարժեքության զարգացման աղբյուրը մանկական տարիքում չհարմարված լինելու մեջ է: Որքան հարմարված է կենդանի օրգանիզմի մանկությունը, այնքան քիչ են զարգացման պոտենցիալ հնարավորությունները: Գերփոխհատուցման գրավականը թերարժեքության առկայության մեջ է, հետևաբար, երեխայի զարգացման շարժիչ ուժերը չհարմարվածությունը և գերփոխհատուցումն են:

Համաձայնելով վերոնշյալի հետ՝ հավելենք, որ հարմարված չլինելը բոլոր դեպքերում չէ, որ զարգացման աղբյուր է հանդիսանում: Մյուս կողմից, լինել հարմարված՝ ամենևին էլ չի նշանակում զարգացման հնարավորություններ չունենալ: Այլապես ստացվում է, որ եթե մարդը թերարժեքության զգացում չունի, զարգացման խթաններ ևս չի կարող ունենալ:

Այսպիսով, թերարժեքության զգացումն իսկապես ուժի աղբյուր է, բայց այն համապարփակ, համընդհանուր բնույթ չի կրում, այսինքն՝ չի դրսևորվում միշտ և բոլոր հանգամանքներում:

Ի. Պավլովը պայմանական ռեֆլեքսներն ուսումնասիրելիս անդրադարձել է նաև փոխհատուցման հիմնահարցին: Բնածին ռեֆլեքսների շարքում նա կարևորում է նպատակի ռեֆլեքսը. «Ամբողջ կյանքը մեկ նպատակի իրականացում է. այն է՝ կյանքի պահպանում» [14, էջ 215]: Ի. Պավլովը կարևորում է նպատակի ռեֆլեքսի նշանակությունը դաստիարակության համար: Նա նշում է, որ նպատակի ռեֆլեքսի արդյունավետ դրսևորման համար պահանջվում է որոշակի լարում, և նպատակին հասնելու հիմնական պայմանը խոչընդոտների առկայությունն է:

Վ. Բեխտերևի, Լ. Վասիլևի, Լ. Վիգոտսկու փորձարարական ուսումնասիրությունները վկայում են, որ հակազդումը կարող է իրականանալ նույնիսկ խոչընդոտող գրգռիչների առկայության դեպքում. դա կարելի է դիտարկել և՛ որպես դոմինանտի, և՛ որպես գերփոխհատուցման երևույթ:

Վ. Պրոտոպոպովը ցույց տվեց, որ մարմնական թերություն ունեցողները կենտրոնական հակազդման կայունությամբ և ինտենսիվությամբ գերազանցում են բնականոն զարգացումով մարդկանց [15]: Նշանակում է՝ հատուկ կարիքներով մարդկանց մեջ գերփոխհատուցման պոտենցիալն ավելի մեծ է:

Ա. Գոնենը, Ն. Լիֆինցևան, Ն. Յալպասան, ինչպես նաև Ս. Շևչենկոն, գտնում են, որ փոխհատուցումը զարգացման անոմալիաների, հիվանդությունների հետևանքով օրգանիզմի խանգարված կամ կորսված հոգեֆիզիոլոգիական գործառույթների փոխարինման կամ վերակառուցման գործընթաց է [6, 17]: Կոմպենսատոր գործընթացը հենվում է մարդու օրգանիզմի պահեստային կամ քիչ գործածված հնարավորությունների վրա:

Վ. Նիկոլայևան իրավացիորեն պնդում է, որ կողմնորոշումը դեպի կոմպենսատոր հնարավորությունները կարևոր է չարորակ հիվանդություններ ունեցող երեխաների հետ վերականգնողական աշխատանք իրականացնելիս [13]: Փոխհատուցման մեխանիզմները հոգեբանական հնարների ամբողջություն են կազմում և նպաստում անձի ինքնահաստատմանը. նրանց հիմնական նշանակությունը հարմարողական էֆեկտն է:

Հատկանշական է, որ փոխհատուցման շատ հնարներ ծագում են ինքնաբուխ կերպով: Երեխաները հաճախ այնպիսի խաղեր և զվարճալիքներ են ընտրում, որոնցում բացահայտ կերպով չեն դրսևորվում կորսված հնարավորությունները:

Ռ. Գրանովսկայան և Ի. Նիկոլսկայան այլ մոտեցում են առաջարկում [7]: Նրանց կարծիքով, եթե փոխհատուցումն իրականանում է ոչ թե թերության, այլ ուրիշ ոլորտում, ջանքերը պետք է ուղղել կոմպենսատոր գործընթացի մոտեցմանը թերության (դեֆիցիտի) տեղին: Երբ ցածր հասակը, կակազելը կամ կաղ լինելն այլ ձևով հեղինակություն ձեռք բերելու ձգտում են առաջացնում, ապա դա փոխհատուցում է հեռու ոլորտում, քանի որ իրականանում է ոչ թե վնասված գործառույթի վերականգնման ճանապարհով, այլ ուրիշ կարողությունների ինքնահաստատման հաշվին: Ավելի հեռանկարային է այն ուղին, երբ թերությունը վարժեցնում են՝ հասցնելով գերփոխհատուցման մակարդակի: Օրինակ՝ կաղ Բայրոնը հայտնի լողորդ է դառնում, ցածրահասակ Նապոլեոնը՝ հրամանատար: Սակայն օպտիմալ է համարվում Դեմոսթենեսի ուղին, երբ կակազողը դառնում է հայտնի հռետոր:

Ի. Լանգմեյերը և Ջ. Մատեյչեկը նույնպես նշում են, որ զգայական ոլորտի թերությունը երեխայի մեջ այդ ոլորտը կիրառելու մեծ ցանկություն է առաջացնում [12]: Սակայն հեղինակների կարծիքով՝ դա խանգարում է այլ ոլորտներից ինֆորմացիայի հոսքին, քանի որ թերությունը շտկելու

ձգտումը շատ ուժեղ է, և երեխան հակված է խթանում ստանալ հենց այն ոլորտից, որտեղ խթանների ընդունումը թերության հետևանքով սահմանափակ է: Օրինակ՝ բացահայտվել է, որ տեսողության թերություն ունեցող երեխաների միայն քիչ մասն է նախընտրում շոշափելիքային ընթերցանությունը (Բրայլի այբուբեն): Գերակշռող մեծամասնությունն ավելի լավ կարդում է սև-սպիտակ գիրը՝ չնայած շոշափելիքային մեթոդի ուսուցման ժամաքանակն ավելի շատ է: Բայց եթե զգայական գործառույթի աշխատունակությունն այնքան քիչ է, որ վերականգնելու հնարավորություն չկա, ապա երեխան կողմնորոշվում է զգայության մյուս օրգանների օգնությամբ, այսինքն՝ այլ աղբյուրներից է խթաններ ստանում:

Կենսական որոշակի իրավիճակներում փոխհատուցման նկատմամբ պահանջը սրվում է: Մարմնական թերությունը հաճախ ախտաբանական հակազդումներ է առաջացնում, որոնք ժամանակի ընթացքում երկրորդային արատների պատճառ են դառնում: Նման իրավիճակում մեծանում է փոխհատուցման գործընթացների կարևորությունը: Փոխհատուցման միջոցով հատուկ կարիքներ ունեցող երեխան կարող է ոչ միայն խուսափել ախտաբանական հետևանքներից, այլև վերականգնել ուժերը և վերինաստվորել իր կյանքը:

Հիվանդության հաղթահարման նման մեխանիզմ է առաջարկում Վ. Նիկոլայևան [13]: Նա գտնում է, որ հոգեկանի և մարմնականի միջև փոխհարաբերությունները զարգանում են փակ շրջանի տեսքով. մարմնական ոլորտում ծագած խանգարումն առաջացնում է հոգեախտաբանական հակազդումներ, վերջիններս էլ հետագա մարմնական խանգարումների պատճառ են դառնում: Սակայն փոխհատուցման գործընթացը կարող է «բացել» փակ շրջանը, այսինքն, երբ արատի հոգեբանական փոխհատուցում է տեղի ունենում, հոգեախտաբանական հակազդումների դրսևորման հավանականությունը նվազում է:

Ուշադրության արժանի է Վ. Սուխարյովի տեսակետը թերարժեքության զգացման վերաբերյալ: Նրա համոզմամբ՝ ֆիզիկական, հոգեկան կամ բարոյական թերարժեքության մասին պատկերացումներն իրենց հետքն են թողնում մարդկանց վարքի վրա: Եվ պարտադիր չէ, որ մարդն անընդհատ մտածի իր թերության մասին: Նույնիսկ երբ թերարժեքության մասին պատկերացումը՝ իրական կամ թվացյալ, մղվում է ենթագիտակցական ոլորտ, միևնույն է, շարունակում է ներգործել մարդու վարքի վրա [16]:

Թերարժեքության բարդույթ ունեցողները բարոյական փոխհատուցման ենթագիտակցական մղում ունեն: Նրանց համար կարևոր է, որ մարդիկ իրենց մասին լավ կարծիք ունենան, և անընդունելի է այն միտքը, որ իրենք ինչ-որ բան ուրիշներից ավելի վատ են անում: Թերարժեքության

բարդույթով մարդիկ անընդհատ ձգտում են ինքնահաստատման, ինչը դրսևորվում է չափից ավելի հպարտության, ինքնասիրության մեջ:

Ե. Շևալյովը և Օ. Կերբիկովը գտնում են, որ շրջապատին հարմարվելիս հատուկ կարիքներ ունեցող մարդկանց հակազդումները կարող են լինել կոմպենսատոր, պսևդոնատիկ (շփումների արհեստական սահմանափակում, ախտանշանների քողարկում) և պսևդոկոմպենսատոր (հիվանդության ժխտում) բնույթի [13]:

Ի. Կոնը «Ես-ի բացահայտումը» աշխատության մեջ ներկայացնում է փոխհատուցման մի քանի ձևեր [10].

- թերության ուղղում լարված ճիգերի միջոցով,
- տհաճ հատկանիշի գիտակցման խուսափում,
- շրջապատող աշխարհի ընկալում սեփական դժբախտության պրիզմայի միջով՝ այստեղից հետևող կասկածամտությամբ, վատատեսությամբ,
- հարմարում շրջապատող մարդկանց դիրքորոշումներին,
- մի ոլորտի թերության փոխհատուցում այլ ոլորտի հաջողություններով:

Ի. Կոնի կարծիքով՝ երեխային պետք է բացատրել, որ փոխհատուցման խելացի տարբերակներն առաջինը և հինգերորդն են, և նշել այն ոլորտը, որտեղ նա կարող է առավելագույնս իրեն դրսևորել:

Թերարժեքության զգացումը փոխհատուցելու յուրօրինակ ձև է առաջարկում Վ. Ֆրանկը [18]: Նա նշում է, որ այցելուին երբեք չի հաջողվում թերարժեքության զգացումը հաղթահարել ուղղակի ջանքերի միջոցով: Ինչքան մարդը կենտրոնանում է թերարժեքության զգացման վրա և «պայքարում» դրա դեմ, այնքան տառապում է դրանից: Սակայն հենց որ նա ուշադրությունն իրենից բացի մեկ այլ երևույթի, օրինակ՝ ինչ-որ առաջադրանքի վրա է կենտրոնացնում, թերարժեքության զգացումը սկսում է բթանալ:

Կարծում ենք՝ թերարժեքության զգացումը թուլանում է նաև այն պատճառով, որ տվյալ դեպքում մարդն իր կատարած գործունեության միջոցով ինքնիրականանում, ինքնահաստատվում է, այսինքն՝ թերարժեքության զգացումը փոխհատուցում է: Ռ. Գրանոլսկայան և Ի. Նիկոլսկայան ևս ընդգծում են, որ ինքնահաստատվելիս մարդու մեջ կյանքի լիարժեքության զգացում է առաջանում [7]:

Փոխհատուցման մեխանիզմները դիտարկելիս հարկ է կարևորել ինքնիրականացման գործընթացը: «Ինքնիրականացում» եզրույթն առաջին անգամ իր աշխատություններում կիրառել է Ա. Մասլոուն: Նա գտնում է, որ մարդիկ ինքնիրականացման միջոցով են զարգացնում իրենց ամբողջ

ներուժը [19]: Իսկ ինքնիրականացման անհրաժեշտ պայմանը, ինչպես պնդում է Ի. Դուբրովինան, մարդու՝ իր մասին ճիշտ պատկերացում կազմելն է [8]: Ասվածից կարող ենք հետևություն անել, որ հատուկ կարիքներ ունեցող մարդիկ պետք է ադեկվատ պատկերացում ունենան իրենց ուժեղ և թույլ կողմերի մասին, օբյեկտիվ գնահատեն կենսական իրադրությունը: Այդ դեպքում միայն նրանք ինքնիրականացման իրական հնարավորություններ կունենան:

Վերադառնանք Վ. Ֆրանկլին: Նա գրում է. «Այսօրվա այցելուն ոչ այնքան թերարժեքության զգացումից է տառապում, ինչպես Ա. Ադլերի ժամանակներում, որքան իմաստի կորստի խոր զգացումից, որը համակցված է դատարկության զգացման հետ» [18, էջ 27]:

Երեխաների մեջ ներանձնային կոնֆլիկտների դրսևորումները, ներոտիկ հակազդումները Վ. Ֆրանկլը դիտարկում է որպես ծնողների կամ հասարակության կողմից հոգեկան տրավմայի ենթարկող ազդեցությունների հետևանք: Որպես փոխհատուցման մեխանիզմ առաջարկվում է երեխայի հետ այնպիսի աշխատանք տանել, որ նա գիտակցի կյանքի իմաստը (քանզի իմաստը չի կարելի տալ, այն պետք է գտնել), հենվի իր անձի ստեղծագործական և ճանաչողական ակտիվության վրա:

Այսպիսով, կյանքի իմաստից զուրկ մարդը չի կարող կենսունակ լինել, և հատուկ կարիքներ ունեցող երեխայի համար կյանքի իմաստ, նպատակ գտնելը թերությունը փոխհատուցելու, ինքնահաստատվելու արդյունավետ միջոց է:

Փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ մենք առաջարկում ենք հետևյալ դրույթը. երբ հատուկ կարիքներ ունեցող երեխան ներառվում է հասարակությունում, նրա մեջ ուժեղանում է փոխհատուցումը: Հասարակության կյանքին մասնակից լինելը հատուկ կարիքներով երեխայի զարգացման խթան է հանդիսանում՝ պարարտ հող դառնալով նրա ընդունակությունների դրսևորման և զարգացման համար: Իհարկե, զարգացման առանձնահատկություններն ինքնին փոխհատուցման խթաններ են ստեղծում, սակայն հասարակության հետ հաղորդակցումն այդ խթաններն ավելի է ուժեղացնում:

Վերոնշյալ դրույթին մենք հանգել ենք որոշակի նկատառումներից ելնելով: Նախ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ անցկացված հետազոտությունը ցույց տվեց, որ նախկինում հատուկ դպրոցի աշակերտները, ներկայումս սովորելով ներառական դպրոցում, ավելի բարձր առաջադիմություն ունեն և արտադասարանական խմբակներում զարմանալի ընդունակություններ են դրսևորում [1]: Եվ երկրորդ, փաստացի տվյալներ կան, որ հատուկ կարիքներ ունեցող

երեխաների վիճակը վատթարանում է, երբ նրանք հնարավորություն չեն ունենում հաղորդակցվել հասարակության անդամների հետ: Ջ. Ուինգը պնդում է, որ հոգեբուժական հիվանդանոցներում կյանքի պասիվ ոճը հանգեցնում է կործանարար հետևանքների, քանի որ այնտեղ հիվանդների սոցիալական փորձը և ինքնասպասարկման հմտություններն անբավարար են [9]: Ա. Ադլերը ևս նշում է, որ միայն ուրիշ մարդկանց հետ համագործակցելու միջոցով մարդը կարող է թերարժեքության զգացումը հաղթահարել [2]: Մտավոր հետամնացությանը նվիրված եվրոպական առաջին համագումարում (Համբուրգ, 1985) ընդգծվել է, որ մեկուսացված հաստատություններում մնալը խորացնում է հաշմանդամությունը [11]: Գերմանացի մասնագետները վկայում են, որ դպրոցն ավարտելուց հետո հատուկ կարիքներ ունեցող երեխաների մահացությունը մեծանում է. պատճառը հասարակության հետ հաղորդակցման ընդհատումն է:

Այսպիսով, հասարակության մեջ ներառումը հարստացնում է հատուկ կարիքներ ունեցող երեխաների կենսափորձը և նպաստում նրանց ինքնուրույնությանը: Եթե հատուկ կարիքներով երեխան փոխհատուցման որոշակի հնարավորություններ ունի, ապա, գտնվելով հասարակության մեջ, այդ հնարավորություններն իրականություն դառնալու ավելի մեծ հավանականություն են ձեռք բերում, փոխհատուցման գործընթացներն էլ ավելի են ուժեղանում, քանի որ երեխան նպատակ, իմաստ է ձեռք բերում, նրա մեջ ինքնահաստատվելու, հասարակության կյանքին իր ուժերն ի սպաս դնելու ձգտում է առաջանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Միրայելյան, Մ.** Հարուկ կարիքներով երեխաների հոգեբանական հարմարումը դպրոցին համարելի ուսուցման պայմաններում: Սեղմագիր հոգեբ. գիտ. թեկն. գիտ. աստիճանի հայցման ատենախոսության, Երևան, 2004.
2. **Адлер, А.** *Наука жить*, Киев, Port-Royal, 1997.
3. **Адлер, А.** *Практика и теория индивидуальной психологии*, Москва, Фонд “За экономическую грамотность”, 1995.
4. **Братусь, Б.** *Аномалии личности*. Москва, Мысль, 1998.
5. **Выготский, Л.** *Основы дефектологии*. Собрание сочинений, в 6-и томах, Под ред. Т. А. Власовой, Т. 5, Москва, Педагогика, 1983.
6. **Гонеев, А., Лифинцева, Н., Ялпаева, Н.** *Основы коррекционной педагогики: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений*, под ред. В. А. Сластенина. Москва, Издательский центр “Академия”, 1999.
7. **Грановская, Р., Никольская, И.** *Защита личности: психологические механизмы*, Санкт-Петербург, СПб. Знание, 1999.

8. **Дубровина, И.** *Школьная психологическая служба*. Москва, Педагогика, 1991.
- 9 *За пределами ухода в сообществе: опыт нормализации и интеграции*, под ред. Ш. Рамон, Амстердам-Киев, 1996.
10. **Кон, И.** *Открытие "Я"*. Москва, Политиздат, 1978.
11. *Коррекционная педагогика. Основы обучения и воспитания детей с отклонениями в развитии: Учебное пособие*, под ред. Б. П. Пузанова, Москва, ИЦ" Академия", 1999.
12. **Лангмейер, Й., Матейчек, З.** *Психическая депривация в детском возрасте*, Прага, Авиценум, 1984.
13. **Николаева, В.** *Влияние хронической болезни на психику*, Москва, Изд-во Моск. ун-та, 1987.
14. **Павлов, И.** *Двадцатилетний опыт объективного научения высшей нервной деятельности (поведения) животных*, Москва, Наука, 1973.
15. **Протопопов, В.** *Избранные труды*. Киев, АН Украинской ССР, 1961.
16. **Сухарев, В.** *Психология добра и зла*. Донецк, Сталкер, 1998.
17. **Шевченко, С.** *Коррекционно-развивающее обучение: Организационно-педагогические аспекты: Метод. пособие для учителей классов коррекционно-развивающего обучения*. Москва, Владос, 1999.
18. **Франкл, В.** *Человек в поисках смысла*, Москва, Прогресс, 1990.
19. **Maslow, A.** *Motivation and Personality*. Third Ed. NY: Addison-Wesley, 1987.